«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-12/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ ներկայացված «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ Կենտրոն է ուղարկել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.09.2014թ. ԴԴ-3-Ե-5249 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 12.09.2014թ. N 09/032-1508 գրությամբ դիմել է «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

3. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 12.09.2014թ. N 07/032-1509 գրությամբ դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-457-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 07.10.2014թ. N ԴԴ-3-Ե-6145 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և Ընկերության միջև 03.04.2014թ. կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-457-1 պայմանագրի գնման առարկա հանդիսացող նամակի ծրարները պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն մատակարարվել, իսկ սահմանված ժամկետից ուշ մատակարարվել են պայմա-

նագրով նախատեսված քանակից պակաս քանակի ծրարներ, որոնք չեն համապատասխանել բնութագրով սահմանված պահանջներին:

Վերոգրյալով պայմանավորված Պատվիրատուն միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը, ինչի մասին Ընկերությանը ծանուցել է 23.07.2014թ. ԴԴ-3-Ե-4374 գրությամբ:

Պատվիրատուն 23.07.2014թ. ԴԴ-3-Ե-4374 գրությունում նշել է նաև, որ պայմանագրի շրջանակներում սահմանված պարտականությունների չկատարման համար Ընկերության նկատմամբ կիրառվել են ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ, սակայն 25.09.2014թ. դրությամբ Ընկերության կողմից չեն հատուցվել Պատվիրատուին պատճառված վնասի, տույժի և տուգանքի գումարները:

Պատվիրատուի ներկայացուցիչը մասնակցելով Կենտրոնում 24.10.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկմանը, հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքն Ընկերության կողմից չեն վերականգնվել:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-12/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրի միջոցով կազմակերպվել է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-457-1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի արդյունքում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի միջև 03.04.2014թ. կնքվել է գրասենյակային նյութերի գնման ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-457-1 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

3. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, նույն պայմանագրի N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 7-րդ չափաբաժնով նախատեսված 204521 հատ «Նամակի ծրար» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 31-րդ աշխատանքային օրը, այսինքն՝ մինչև 21.05.2014թ., ինչն Ընկերության կողմից խախտվել է, քանի որ նշված քանակությամբ ապրանքն ըստ հանձնման ընդունման արձանագրության՝ Պատվիրատուին մատակարարվել է 25.06.2014թ. (25.06.2014թ. հանձման ընդունման թիվ 11 արձանագրություն):

4. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 7-րդ չափաբաժնով նախատեսված 255651 հատ քանակությամբ «Նամակի ծրար» ապրանքատեսակի մատակարարումը նախատեսվել է կատարել 2014թ. 2-րդ եռամսյակում, ինչն Ընկերության կողմից խախտվել է, քանի որ 2014թ. հունիսի 30-ի թիվ 12 հանձնման ընդունման արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 255651 հատ ծրարի փոխարեն Պատվիրատուին մատակարարվել է ընդամենը 71329 հատ նամակի ծրար:

5. Պատվիրատուն 23.07.2014թ. ԴԴ-3-Ե-4374 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, առաջնորդվելով Պայմանագրի 3.1.4 կետով, միակողմանիորեն լուծում է Ընկերության հետ կնքված Պայմանագիրը և գրության ստացման փաստով Պայմանագիրը համարել է լուծված:

6. Ընկերությունը Պատվիրատուի 23.07.2014թ. ԴԴ-3-Ե-4374 գրությունը ստացել է 25.07.2014թ.:

7. Ի լրումն 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6145 գրության, Պատվիրատուն 23.12.2014թ. ԴԴ-3-Ե-7977 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով Ընկերության կողմից չեն վերականգնվել Պատվիրատուին պատճառված վնասները, տույժը և տուգանքը, ինչպես նաև չի վճարվել տուժանքի մասին համաձայնությամբ սահմանված Ընկերության կողմից Պատվիրատուին վճարման ենթակա 958.755 ՀՀ դրամ տուժանքը:

5. ՍՑ-ԳԲԽ-12/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6145 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, ի լրումն 07.10.2014թ. ԴԴ-3-Ե-6145 գրության Պատվիրատուի ներկայացրած 23.12.2014թ. ԴԴ-3-Ե-7977 գրությունը, լսելով Կենտրոնում 24.10.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցչի կարծիքը, ինչպես նաև ուսումնասիրելով քննարկման ժամանակ վերջինիս կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք

տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսված տեսակի գրասենյակային նյութեր, իսկ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ ապրանքը մատակարարվում է նույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է ոչ պատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը՝ 204521 հատ քանակությամբ նամակի ծրարը Պատվիրատուին չի հանձնել մինչև 21.05.2014թ. և 2014թ. 2-րդ եռամսյակում 255651 հատ ծրարի փոխարեն Պատվիրատուին է հանձնել ընդամենը 71329 հատ նամակի ծրար:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելն Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 08.09.2014թ. N 73-1/[655311]-14 գրությամբ «ՀԱՆՍ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-12/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մկրտչյան